

ընտանեան սահման ընակութեան ցեղին Յոկտանայ. Ծննդոց գլ. Ժ. Համար 30:

(Շ-բ-ն-ի-ի)

ԱՐԻՍՏԱԿԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԵՂՐԱԿԱՆ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՎՋՐՆԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՂՈՅԹՆԵՐԻ

(Շ-բ-ն-ի-ի)

ԺԲ.

Չ. քային շտիներ, ևն սառնել.

Այժմ տեսնենք ի՞նչ է պատահում ջրի հետ, երբ որ նա տաքանում է կամ սառչում:

Վեր առնենք մէկ միաբերնանի մետաղէ խողովակ և յարմարցնենք նորան մի մսոց, խողովակը կիսով չափ ջրով լցնենք, մսոցը մացնենք նորա մէջ և սկըսենք խողովակը տաքացնել կանթեղի վերայ: Արբ որ ջուրը եռայ, մսոցը կսկսի արագապէս բարձրանալ: Բայց եթէ խողովակը մսոցի հետ ընկղմենք պաղ ջրի մէջ, մսոցը ցած կլինի: Մսոցի այդ բարձրանալը և ցածրանալը յառաջ է գալիս նորանից, որ ջուրը շոգիանալով բաւականին լայնանում է և աւելի մեծ ծաւալ է բռնում և հրում մսոցին դէպ ի վեր: Արբ որ խողովակը ընկղմում ենք պաղ ջրի մէջ, ջրաշոգիները վերբաւին փոխարկվում են ջրի, որով նա քիչ ծաւալ է բռնում և դորա համար մսոցը սկսում է ցածրանալ: Տաքացած խողո-



վակի մէջ մենք կարող ենք ձեռքերով ներս հրել մսոցը, բայց հէնց որ ձեռքներս յիտ քաշենք, նա իսկոյն կսկսի բարձրանալ: Ուրեմն ջրային շոգիները առաջդական են:

Շոգիշարժ մեքենաները, որ գործ են դնում երկաթուղիների վերայ և գործարաններումը, կախումն ունին ջրային շոգիների այս առաջդականութիւնից: Ներկայացնենք մեզ մի կաթսայ ամրացած կափարիչով: Կափարիչից երկու խողովակ է տարած մի երկայն և կլորակ արկղի մէջ, որ սավում է դլան: Այդ դլանի մէջ կարող է ազատութեամբ շարժել մսոցը, որ կայ արդէն նորա մէջ: Յիշեալ երկու խողովակներից մէկը տարած է դլանի վարին մասը, իսկ միւսը՝ վերին, և երկոքին խողովակներն էլ մի մի ծորակ ունին: Չըլանի հակառակ կողմից գալիս են նոյնպէս երկու խողովակ ծորակներով, մինը՝ վարին, միւսը՝ վերին մասներից: Այդ խողովակները տարած են ուրիշ արկղի մէջ. որ անուանվում է Խորացուցիչ կամ ցլր-բարան: Խտացուցիչը նորա համար է շինուած՝ որ պողեցնէ ջրային շոգիները, այդ պատճառով էլ նա միշտ պատած է պաղ ջրով: Խտացուցչի վարին մասնումը մի ծակ կայ, որով դուրս է հեղում նորա մէջ ժողովուած ջուրը:

Կաթսան ջրով լցնելով տաքացնում են: Արբ որ ջուրը եռէ գալիս, վարի կողմի խողովակի ծորակը բաց են անում: Այսպիսի խողովակն է, որ գնում է կաթսայից դլանի մէջ: Բաց են անում ծորակը և վերին խողովակի՝ որ դլանից գնում է ցլր-տարանը, այդ ժամանակ ջրային շոգիները առաջին խողովակով բարձրանալով մըս-

նում են գլանի մէջ և իւրեանց առածը դականութեամբ բարձրացնում են մի խոցը դոյն այդ միջոցին մտոցի վերայ եղած օղը դուրս է գալիս երկրորդ խոզովակի միջով և գնում ցրտարանը: Արբ որ մտոցը բաւականաչափ բարձրանում է, այդ ժամանակ այդ երկրորդն ծորակները փակում են և բաց են անում միւս երկու ծորակները: Ե ոգիները մանում են գլանի մէջ վերին խողովակներով, և սկսում են վերեւից հրել մտոցին և այսպէսով վայր իջեցնել: Մի և նոյն ժամանակ մի խոցի ամէկ եղած շողիները դուրս են դրնում ցրտարանը, որի մէջ նոքա ջուր են դառնում և դուրս հեղվում նորանից: Արբ որ մտոցը հասնում է գլանի յատակին, այն ժամանակ փակում են այս երկրորդն ծորակները և դարձեալ բաց անում առաջին երկու ծորակները, որով մտոցը սկսում է էլի վեր բարձրանալ: Մտոցի կոթից կապում են մեքենայի այլ մասները, որոնք մտոցի ցածր ու բարձր անելուց շարժում են մեքենան:

Սորանից երևում է որ մարդոց և անասնոց գործը կարող են կատարել շողիները: Ինչ որ առաջ մի քանի տասնաւոր մարդոց ձեռքով էր շինվում, այդ մի և նոյն, և այն աւելի շուտ, կարող է շինել մի հատ շողեշարժ մեքենայ երեք կամ չորս մշակով: Բայց ի հարկէ բոլոր շողեմեքենաները մեր նկարագրածի պէս հասարակ և պարզ չեն շինուած, նոցանից շատերը աւելի բազմաթիւ մասերից են բաղկանում: Այսպէս օրինակի համար բոլոր շողեշարժ մեքենաների ծորակները բացվում ու խփվում են առանց մշակների, ուրիշ գործիքների միջնորդութեամբ, և

այդպէս, յայտնի բան է, աւելի յարմար է, պատճառ՝ մշակը չի կարող շուտ շուտ վրայ հասցնել իւր գործը և շատ անգամ կուշացնէ էլ կամ կը մոռանայ ամեն մի ծորակ իւր ժամանակին բաց անել կամ փակել:

Առացող ջրի և նորանից դուրս եկող շողիների բարեխառնութիւնը միշտ մընում է անփոփոխ: Սորա ստուգութիւնը կարող ենք ջերմաչափով խմանալ: Աթէ եռայու միջոցին մէկ ջերմաչափ ջրի մէջ բռնենք, միւսը նորա շողիների, երկրորդն ջերմաչափները մի և նոյն ջերմութեան աստիճանը կը ցուցնեն, այս ինքն 80° Ռ. կամ 100° Վ. ուրեմն երբ որ մենք միս կամ մի ուրիշ բան ենք եփում, անխղճութիւն կը լինէր մեր կողմից օջաղի մէջ փայտ աւելացնելով կամենալ եռացող ջրի տաքութիւնը սաստկացնել: Արբ որ ջուրը եռում է, այնքան փայտ միայն հարկաւոր է աւելացնել որ ջուրը չը դադարի եռալուց, իսկ եռացումը սաստկացնելով մենք չենք կարող տաքութիւն աւելացնել ջրի մէջ:

Եւտ գործարանների մէջ ջրաշողիները գործ են դնում զանազան մարմիններ եփելու համար: Սորա համար հետեւեալ եղանակն են գործ դնում: Մի քանի չանախների մէջ ածում են ջուր և եփելի նիւթերը: Յետոյ այն կաթնայից, որոյ մէջ եռացնում են ջուրը, քանի մի երկար խողովակներ են տանում յիշեալ չանախների մէջ: Չանախներում եղած խողովակների ծայրերից բաց են անում մանր ծակոտիքներ, որոնցով շողիները մտնում են չանախների ջրի մէջ և եռացնելով եփում միջի եղած նիւթի զինները:

Այս փորձը փոքր զիրքով ինքննրս էլ կարող ենք անել : Ա լերցնենք մի ապակեայ խողովակ և այնպէս շորացնենք որ մի սրբունդը աւելի երկար լինի, քան զմիւսը : Աորացնելն էլ այսպէս կանենք : Խողովակի որ մասից որ պիտի կորացնենք, այն մասը կը բռնենք կանթեղի վերայ, երբ որ խողովակը կսկսի կէծանալով փափկել, այդ միջոցին փոքր առ փոքր և զգուշութեամբ կը կորացնենք նոյն իսկ կանթեղի բոցի վերայ : Այժմ վերցնենք մէկ ուրիշ միաբերնանի խողովակ, դորա մէջ ածենք փոքր ինչ պող ջուր և բերանը ամբացնենք խցանով : Խցանի մէջից մի ծակ բանալով կոր խողովակի կարճ սրունքը մոցնենք նորա մէջ : Ա լերցնենք էլի մէկ ուրիշ միաբերնանի խողովակ, դորա մէջ էլ պող ջուր ածենք և յետոյ կոր խողովակի երկայն սրունքը մոցնենք դորա մէջ : Այժմ եթէ սկսենք տաքացնել առաջին միաբերնանի խողովակը, նորա միջի ջուրը կսկսի շոգիանալ և կոր խողովակով այդ շոգիները կանցնին միւս միաբերնանի խողովակի մէջ, և եռացնել նորա մէջի եղած ջուրը, որոյ մէջ եթէ մի որ և իցէ կփելի բան ձգենք, կեփուէր անշուշտ : Արբեմն այս կերպով տաքացնում են տան սենեակները : Սորա համար տան պատերից խողովակներ են անցկացնում, որոց միջով շոգին երթալով տաքացնում է սենեակները : Բայց այս կերպ տաքացնելը այն անյարմարութիւնը ունի, որ չի մաքրում սենեակների օդը :

Մենք գիտենք որ բոլոր մարմինները ցրտութիւնից խաանում են այս ինքն սխալում են, այդ պատճառով պէտք էր որ ջուրն էլ սխալուէր : Վախայն ջրով լեքը

բաժակը, երբ որ դնում ենք ցրտումը, նորա մէջի ջուրը սառելով ձեղքում է բաժակը : Արեմն ջուրը այդ կողմանէ բացառութիւն է կազմում և չի հպատակում ընդհանուր կանոնին, որով բոլոր մարմինները պաղելով սխալում են : Ջուրը երբ որ սառչում է, աւելի մեծ տարածութիւն է բռնում, այսինքն լայնանում է նորա ծաւալը : Վիտակնք ուշադրութեամբ և տեսնենք ի՞նչ է պատահում ջրի հետ նորա սառնանալու միջոցին :

Ա երանենք մէկ լայն շիշ լայն պարանոցով և բերանը փակենք փայտէ խցանով : Խցանի միջով մի ծակ բանանք և նորա մէջ մոյնենք երկու կողմէն բաց, բարակ ապակեայ խողովակի մի ծայրը : Ե շիշը բոլորովն լցնենք ջրով և նորա յատակումը դնենք մի փոքրիկ ջերմաչափ, յետոյ բերանը ձեփենք կնքամտով : Խողովակի մէջն ևս ածենք փոքր ինչ ջուր և ամառենք որ ջրի բարեխառնութիւնը 14⁰ Ռ. տաքութիւն ունի : Այսպէս պատրաստած շիշը դնենք ձիւնի կամ սառուցի մէջ, ջուրը կսկսի պաղել և մենք կը նկատենք, որ խողովակի մէջ եղած ջուրը սկսում է ցածրանալ : Այդ ցոյց է տալիս որ ջուրը պաղելիս առաջ սկսում է սրխմուկել, նորա ծաւալը սկսում է պակասել : Բայց հենց որ ջրի տաքութիւնը կը ցածրանայ մինչև 3¹/₂⁰ Ռ., այնուհետև ջուրը կսկսի խողովակի մէջ բարձրանալ աւելի և աւելի բարձր : Արբ որ ջերմաչափը ցոյց կը տայ 0⁰, այն ժամանակ ջուրը կսկսի փոխարկուիլ սառոյցի, բայց և այդ միջոցին նա կսկսի լայնանալ և խողովակի միջից կսկսին վեր բարձրանալ սա-

առեցի կտորներ: Արովհետեւ ջուրը 3¹/₂⁰ յետոյ էլ չի սխմվում, ուրեմն այդ աստիճանի բարեխառնութեան ջուրը իւր ամենախիտ վիճակին մէջն է, դորանկից ցածր և բարձր աստիճանի մէջ ջրի խտութիւնը սկսում է աստիճան առ աստիճան պակասել:

Մենք նկատում ենք, որ մեծամեծ դեպքերի մէջ բոլոր ջուրը չի սառչում, այլ նոցա երկաններն են սառչում, շատ կամ քիչ հաստութեամբ, իսկ ջրի վարին մասները չեն սառչում: Բացատրենք դորա պատճառը: Ջրի վերին մասները պաղ օդին դիպելով, սկսում են իրանք ևս պաղել, և առաւել խտանալով, ուրեմն և ծանրանալով՝ իջնում են ցած, և իրանց տեղը տալիս աւելի թիթե մասներին, որոնք բարձրանալով նոյնպէս խտանում և վայր են իջնում: Ջրի մասանց այսպիսի վեր ու վայր շարժումը շարունակվում է մինչև բոլոր ջրի բարեխառնութեան աստիճանը հասնում է 3¹/₂⁰, որ անել է թէ դորանկից աւելի էլ չի կարող խտանալ, ուրեմն և ծանրանալ, որ վայր իջնի: Եւ չա այս միջոցին վերին մասները աւելի ևս պաղելով, այլ ևս չեն խտանում, և այսպէս մնալով երեսին սառչում են, իսկ սառոյցը որ վատ հաղորդող է սաքութեան՝ պաշտպանում է իւր ներքեւը եղած ջուրը սառչելուց: Աթէ սառոյցը ջրիցը ծանր լինելը, այն ժամանակ յայտնի բան է, բոլոր ջուրը կը սառչէր (և այն ժամանակ վայ կը դար ձկներին պլսին): Արովհետեւ միաշափ ծաւալով սառոյցը թիթե է ջրից, այդ պատճառով էլ սառոյցը լողում է ջրի երեսին:

Ջուրը իւր սառչելու միջոցին լայնանում է բաւականին ուժղնութեամբ, այն-

պէս որ իւր այդ լայնանալու ուժովը կարող է ձեղքել մինչև անգամ հրացանի խողովակը: Շատ անգամ քարաժայռերի ձեղքերում ջուրը սառչելով կարողանում է շրջել և անդահան անել ահագին մեծութեան ժայռեր և լեռների գագաթներէն ցած գլորել:

ԺԳ.

Մարտիներէն 12-ին:

Մեր գործածական աղից մի պողոտեց վերցնենք և ամենք ջրով դրած բաժակի մէջը: Աթէ սկսենք դդալով խառնել այդ աղը, մենք կը նկատենք որ դա կսկսի փոքր առ փոքր անհետանալ ջրի մէջ և տեսանելի մարմինը կաներևութանայ: Եղուկների մէջ մարմինների այս կերպ անհետանալը ասվում է Լուծում կամ Լուծել: Աթէ վերցնենք ուրիշ տեսակ աղեր օրինակ Պլաւերեան աղ, որ գործ են դնում որպէս լուծողական դեղ, բորակ, որ վառօդ պատրաստելու համար են գործ դրնում, և սրանց վերայ էլ մի և նոյն փորձն անենք, կը տեսնենք, որ այս աղերն էլ են հեշտութեամբ լուծվում ջրի մէջ: Ոորա հակառակ՝ միւս աղերը, ինչպէս հանգած կիրը, կաւիճը, համարեա թէ չեն լուծվում ջրումը, կրի մի մասը լուծվում է 600 մասը ջրի մէջ, բայց եթէ մի մասնից աւելի վերցնենք 600 մաս ջրի համար, այդ աւելին չի լուծուիլ, այլ կը նստի ամանի յատակին: Բայց եթէ փոշեացրած կաւիճը ամենք քացախի մէջ, նա իսկոյն կը լուծուի: Որանից երևում է, որ բոլոր մարմինները միտկերպ չեն լուծվում հեղուկների մէջ, այլ կան որ քիչ և լուծ-

վում, և կան՝ որ շատ: Ծորելի և առած-
 դականահեղուկ մարմինները կարող են
 լուծուիլ հեղուկներն մէջ: Կարմիրների
 համը միայն այն ժամանակ կարող ենք առ-
 նուել, երբ որ նոքա լուծուելու ընդունակ
 են: Կարմիր մասները մեր լեզուին դիպելե-
 լով՝ լուծվում են շողիքի մէջ և մենք այդ
 միջոցին զգում ենք նորա համը: Բայց
 այն մարմինը, որ լուծուելու ընդունակու-
 թիւն չունի, մենք չենք կարող իմանալ
 նորա համը:

Քստ մեծի մասին՝ որքան բարձր է հե-
 ղուկի բարեխառնութեան աստիճանը, այն-
 քան աւելի է լուծվում նորա մէջ լու-
 ծուելի մարմինը: Այսպէս 100 մաս զո-
 աստիճանի ջրի մէջ միայն 13 մաս բորակ
 է լուծվում, բայց 80⁰ տաքութեան մէջ,
 235 մաս, Գլաւբերեան աղը 100 մաս զո-
 աստիճանի ջրի մէջ 5 մաս է լուծվում,
 բայց 33⁰ մէջ՝ 327 մաս: Իսկ մեր գոր-
 ծածական աղը ուշադրութեան արժանի
 է այս կողմանէ, դա ամեն տեսակ բորե-
 խառնութեան մէջ էլ համարեա միաչափ
 է լուծվում: Այսպէս 100 մաս 10⁰ ջրի
 մէջ լուծվում է 36 մաս աղ, իսկ 80⁰ մէջ
 հաղիւ 38 մաս: Ուշադրութեան արժանի
 է և այս, որ բոլոր լուծուածները աւելի
 բարձր բարեխառնութեան մէջ են եռում
 քան թէ հասարակ ջուրը:

Որովհետեւ մարմիններից շատերը ջրի
 մէջ լուծվում են, իսկ շատերը չեն լուծ-
 վում, մենք այս երևութից օգուտ քաղե-
 լով՝ կարող ենք շատ իրարու հետ խառ-
 նուած մարմիններ միմեանցից բաժանել:
 Թող ունենանք հասարակ աղ, ածուխի
 և աւաղի հետ խառնուած: Ինչպէս բա-
 ժանենք աղը այդ խառնուրդներից:

Այնքանք մի ձագար և նորա խողովա-
 կը դնենք դատարկ սրուակի մէջ, իսկ ձա-
 գարի խողովակի վերին բերանին մի քիչ
 բամբակ դնենք, յետոյ այդ բամբակի վե-
 րայ թափելով խառնուրդը՝ նորա վերայ
 ածենք ջուր: Ծուրը ներս ծծուելով
 խառնուրդի մէջ, կսկսի լուծել աղը և
 իւր հետ վայր իջեցնել սրուակի մէջ բամ-
 բակի միջով, առանց մի որ և է ներգոր-
 ծութիւն անելու աւաղի և ածուխի վե-
 րայ, որոնք իւր մէջ չեն լուծվում, նոքա
 կը մնան բամբակի վերայ և չեն կարող նո-
 րա միջով թափանցել ջրի պէս: Ենտոյ
 սրուակի մէջ ժողովուած ջրի համը որ
 տեսնենք, կիմանանք որ աղի է: Եւ արու-
 նակելով ձագարի մէջ ջուր ածելը՝ մենք
 այդ կերպով վերջապէս բոլոր աղը կը ո-
 թոշենք միւս մարմիններից: Եւ եթէ կա-
 մենանք այժմ աղի լուծուածը բաժանել
 ջրից և ստանալ ցամաք աղ, կսկսենք
 տաքացնել: Աւուծուածը սրուակից կը
 դարձանակենք մի ձեւապակեայ ամանի մէջ
 և կը դնենք կրակի բոցի վերայ, ջուրը խ-
 կոյն կսկսի շոգիանալ և մենք կստանանք
 ցամաք և պինդ աղ:

Կարմիրների ջրի մէջ լուծուելու ըն-
 դունակութիւն ունենալուցը օգուտ քա-
 ղելով, մենք նրանցից շատերը գործ ենք
 ածում կերակրի մէջ: Երբ որ միսը ե-
 փում ենք ջրի մէջ, նորա մասներից շա-
 տերը լուծվում են ջրուով և մենք ստա-
 նում ենք մոխր ջուր կամ արգանակ, որ
 բուականին համեղ և ստողջարար է:
 Չայի տերեւները եռացած ջրի մէջ ածե-
 լով լուծում ենք նորա մէջ եղած հիւթը,
 որի մէջ յետոյ շաքար ձգելով սկսում
 ենք անուշ անել: Եւ քարը նոյնպէս լուծ-

վում է ջրի մէջ և հաղորդում նորան քաղցրութիւն: Աթէ որ ջուրը չը լուծէր միտը, չայր, շաքարը, անկարելի կը լինէր դրանց կերակրի մէջ գործածել:

Բնութեան մէջ պատահող ամենամաքուր ջուրը նոր ձնի և անձրևի ջուրն է: Առքա երկրի վերայ ընկնելուց յետոյ, հոսելու ժամանակ, իրանց հանդիպած հոսիչներ մասնները լուծում են: Այդ պատճառով գետի, լճի, աղբիւրի և այլ տեսակ ջրերի մէջ գտնվում են շատ թէ քիչ այլ և այլ մարմինների մասներ իրանց մէջ լուծուած: Բայց եթէ այս տեսակ ջրերը չունին ոչ համ և ոչ հոտ, մենք կարող ենք աներկիւղ գործածել, թէ խմելու և թէ կերակրի համար:

Արբեմն գետի և մանաւանդ աղբիւրի ջրի մէջ խիստ շատ կիր է լինում լուծուած: Այսպիսի ջուրը ասվում է կոշտ ջուր: Սոցա մէջ չեն լուծվում եփուելու ժամանակ, ոչ սիսեռը և ոչ լուրիան, պատճառ՝ եռալու ժամանակ ջրից բաժանվում է կրային մասները և նստում դոցա հատիկների վերայ կրային փեճեկի պէս և արգելք են լինում ջրին ներս թափանցելու նոցա մէջ: Բացի սորանից, այս տեսակ ջրերի մէջ սապոնն ևս չի փրփրում, այդ պատճառով դոքա լուացքի համար ևս պիտանի չեն: Իսկ եթէ ջրի մէջ կիր չը կայ և կամ եթէ կայ էլ, բայց շատ քիչ, այդպիսի ջուրը ասվում է կակոնդ, և նա թէ խմելու և թէ կերակուրի և լուացքի համար լաւ է: Պատճառն այս կիրն է որ անձրևի ջուրը ամեն տեսակ ջրից գերադասվում է լուացքի համար:

Շատ անգամ ջրի մէջ այնքան շատ է լինում զանազան կողմնակի նիւթեր՝ որոնցից

ջուրը մի առանձին հոտ և համ է ստանում: Այսպիսի ջուրը ասվում է հանդայն և մի քանի տեսակ հիւանդութիւնների վերայ առողջարար ներգործութիւն ունի: Հանդային ջրերը, նայելով թէ ինչ տեսակ հոտ ու համ ունին և ինչ նիւթեր կան նոցա մէջ լուծուած, լինում են ծծմբային, դառը, թթու, երկաթի, և այլն:

Ջուրը լուծում է օդը և նորա նման մարմինները: Ջրի մէջ օդի լինելը շատ կարևոր է թէ մեզ և թէ ձկների համար: Առացրած ջուրը, որի միջից արտոքուած է բոլոր օդը, անհամ է լինում: Ձկները կենում են ջրումը և նոցա շնչառութեան համար հարկաւոր է օդ: Աթէ ձուկը ձրգենք եփուած ջրի մէջ, նա խկոյն կը սատակի, պատճառ, ինչպէս ասացինք, այս տեսակ ջրի մէջ օդ չը կայ:

Բացի գետի կակոնդ ջրից՝ մի ուրիշ տեսակ ջուր էլ կայ, որ ասվում է Զոֆէ ջուր: Այդ տեսակիցն է բոլոր ծովերի և ովկիանոսների ջրերը: Օռովի ջուրը փոքրիկ քանակութեամբ թափանցիկ է, բայց մեծ քանակութեան մէջ ստանում է կապտականաչ գոյն, փոթորիկների ժամանակ ծովը ստանում է գորշ գոյն: Օռովի ջրի համը շատ անդուրեկան է, աղիադառն է, պատճառ՝ նորա մէջ շատ աղիադառն աղեր կան լուծուած, նորա մէկ փունտի մէջ չորս լօտ այսպիսի աղ կայ: Այս տեսակ ջրով լուացած շրերը շատ դժուարութեամբ են ցամաքում արեգակի տաքութիւնով, պատճառ, աղիադառն աղը անյագու թեւամբ իւր մէջ է քարշում ջուրը: Օռովի ջուրը գետի ջրից ծանր է:

ԺԴ.

ԲՆԻՐԵԿԱԿՈՒՄԸ.

Մի բաժակ կիսով չափ ջրով լցնենք, նորա մջ փոքր առ փոքր ածենք մեր գործածական աղից և սկսենք գդալով խառնել: Այդ կսկսի լուծուել, բայց վերջապէս մենք կը նկատենք, որ էլ չի լուծվում, ինչքան էլ խառնենք գդալով, և այդ չը լուծուած մասները ցած կիջնեն և կը նստեն ջրի յատակին: Ասել է թէ բաժակում եղած ջուրը, որոյ բարեխառնութեան աստիճանը սկսնակի բարեխառնութեանն է հասարար, որքան որ լուծելու կարողութիւն ունէր, լուծեց, էլ աւելի չի կարող ընդունել իւր մջ աղ: Այսպիսի լուծուածը ասվում է կշտոցա՞ կամ յա՞էցա՞: Աթէ սկսենք այժմ եռացնել մեր լուծուածը, մենք կը նկատենք, որ ջրի սակ նստած մասն ևս լուծուել է: Այդ նորանից յառաջ եկաւ՝ որ ինչպէս արդէն մենք նկատեցինք, 80⁰ Ա. ջրի մջ փոքր ինչ աւելի է լուծվում աղը, քան թէ հասարակ բարեխառնութեան մջ: Արեմն տաք յագեցած լուծուած ստանալու համար, պէտք է փոքր ինչ աւելի աղ լուծել: Տաք լուծուածը պաղելու ժամանակ՝ աղը մասամբ կը դատուի նորանից, պատճառ՝ ցածր բարեխառնութեան մջ ջուրը չի կարող այլ ևս առաջուան չափ աղ լուծել:

Մեր ստացած աղի լուծուածը այժմ ածենք մի տափակ պնակի մջ և այդ պրնակը գնենք մի տաք տեղ, և երեսը թըղթով ծածկենք, որ թող քան չը նստի վերան, բայց չը պէտք է շատ ամուր ծածկել: Մի քանի օրից յետոյ եթէ թուղթը

վերցնենք, կը տեսնենք որ բոլոր ջուրը ցամաքել է, իսկ աղը նստել է ամանի մջ հաստատուն մարմնի ձև ստացած: Մի և նոյն ժամանակ մենք կը նկատենք որ բոլոր աղից կազմուել են բազմաթիւ կտորներ՝ զանազան մեծութեան, բայց բոլորն էլ միատեսակ ձևի, այսինքն փոքրիկ վեցանիսաների նման կամ պիւրամեդի ձևով: Աւ միշտ էլ այս երկու ձևը կստանանք երբոր մեր գործածական աղի լուծուածը սկսենք վերոյիշեալ եղանակով ցամաքացնել կամ ասենք շոյիացնել: Բայց ի հարկէ կտրող է պատահել՝ որ ձևերից մէկի մի մասը ամբողջապէս չի լինիլ դուրս եկած, օրինակ, ասենք վեցանիսանից մի կտոր կիսատ է մնացել, այսպիսի կիսատ մնացած ձևերը եթէ ձգենք լուծուածի մջ, նորա պակասորդը իսկոյն կը լրանայ և մենք կըստանանք ամբողջ վեցանիստ այսինքն խորանարդ:

Որոյնպէս եթէ բորակից շինենք տաք յագեցած լուծուած և մի այնպիսի տեղ դրնենք, որ սկսի կամաց կամաց պաղել, նա մասամբ կը զատուի լուծուածից՝ բայց բորակը վեցանիստի ձև չի ընդունիլ: Աս կը նստի ամանի վերայ և կը պաղի ուրիշ ձևով, դորա ընդունած ձևը կը նմանի այնպիսի սիւնակի, որ ունենայ վեց կողմը և բոլոր կողմերի մի ծայրը գէպ ի վեր բարձրանալով սրուի: Այս տեսակ ձևը ասվում է պէրա՞մէդ, կամ քո՞րդ: Աւրիշ տեսակ աղերը ուրիշ ձև են ընդունում: Աղերի այս մշտական ձևերը՝ որոնք ստացվում են նոցա լուծուածի կամաց կամաց ցամաքելուց կամ գոլորշիանալուց, ասվում են քի՞միքալ իսկ բուն երեսը թէ քի՞միքալո՞ւմ:

Բիւրեղները ոչ միայն լուծուածի շոգիացմամբն են ստացվում, այլ կարելի է ուրիշ հնարքով էլ ստանալ, օրինակ, հալելով: Օճու մըը հալնք և թողնք խաղաղ մնայ մինչև որ երեսին կեղև բռնի, յետոյ ծեղքենք այդ երեսի կեղևը և նորա միջից դուրս թափենք չը պողած հեղուկ ծծումբը: Աթէ կոտրենք յետոյ այն ամանը՝ որոյ մէջ հալեցինք ծծումբը, այն ակզ կը գաննենք ծծումբի բիւրեղներ տարանկեան կամ ասենք ոսմրոսի ձևով:

ԺԵ.

Հաղորդակցվող անօթներ.

Մի կտոր ասխտակ կտրենք փայտից այնքան լայնութեան, որ իւր ուղղաձիգ դրութեամբը դժուարութեամբ մանի բաժակի մէջ. յետոյ մտցնենք այդ ասխտակը բաժակի մէջ, միայն վարի ծայրը յատակին չը հասցնենք: Այս կերպով մենք բաժակը երկու հաւասար բաժին կը լինինք արած, կամ ասենք բաժնած կը լինինք երկու անօթի, որոնք վարի կողմից իրարու հետ հաղորդակցութիւն կունենան: Մէկ կէսի մէջ որ ջուր ամենք, այդ ջուրը տակի տակովը կանցնի միւս կէսը, այնպէս որ՝ երկոքին կէսերի մէջ ևս ջուրը կանգ կառնու միահաւասար բարձրութեամբ: Աւրեմն միմեանց հետ հաղորդակցվող անօթների մէջ ջրի կանգ առած տեղի բարձրութիւնը ամենի մէջ միահաւասար է, միանման է: Նայենք չայդանի վերայ. կարելի է ասել, որ նա երկու հաղորդակցվող անօթներից է բաղկացած, մէկը մեծ, իսկ միւսը փոքր, որին ասում են և լուրս: Աթէ չայդանը ջրով լցնենք, մենք

կը նկատենք, որ երկոքին մասների մէջ ևս ջուրը միահաւասար բարձրութեամբ է կանգ առած:

Հեղուկների այս կարևոր յատկութեան վերայ է հիմնած և ջրի մէկ տեղից միւս տեղ տանելը խողովակներով: Աերկայացնենք մեզ երկու սար, մէկը միւսից փոքր ինչ հեռու: Այդ սարերից մէկի վերայ կայ լաւ ջուր ունեցող լիճ, իսկ միւսի վերայ ամենեին ջուր չը կայ և այն տեղի բնակիչները հարկադրուած են մեծ դրժուարութիւն յանձն առնել և երթալ առաջին սարի լճից ջուր բերելու իրանց համար: Հեղուկների վերոյիշեալ յատկութիւնից օգուտ քաղելով՝ այս տարաբաղդութեան առաջքը հետեւեալ կերպով կարելի է առնել: Մեաաղէ խողովակներ կառնենք և նրանցով կսկսենք լճի ջուրը ցած բերել սարից իւր ստորոտը, յետոյ դաշտի միջովը կը հասցնենք ցամաք սարի ստորոտին և այն տեղից կսկսենք վեր տանել դէպ ի նորա դուրսը: Տայց յայտնի բան է խողովակները գեանի երեսովը չենք տանիլ, այլ էն քիչը մի կէս արշին խորութեան միջով, որպէս զի ձմեռը ջուրը չը սառչի, և ամառն էլ խիստ չը տաքանոյց կամ անց ու դարձ անող սայլերի և մարդոց ստի տակ չընկնեն խողովակները: Այդ խողովակի ծայրերն էլ իրարու մէջ կը մտցնուին և այնպիսի դանդուածով կամրացնեն, որ ջրից չը Ֆուսուի: Այսպէս ջրի ճանապարհը պատրաստելուց յետոյ ներս կը հրա իրենք լճին ջրին խողովակների մէջ և նա առանց կամակորուելու կսկսի խողովակների միջով հասնել միւս սարի դուրսը, և այն տեղ կսկսի դուրս բղխել և ուրախացնել ջրա-

կարօտ բնակիչներին: Այն ակզ մեծամեծ աւաղաններ կը պատրաստեն, որոյ մէջ կը թափուի ջուրը:

Իսկ եթէ կամենում են քաղաքներում, որ զեւրոյ մաքուր ջուր տանեն իրանց աները, դարձեալ մի և նոյն հնարքն են գործ դնում: Ահա ինչպէս: Գետի կամ լճի ափումը շինում են բաւականին բարձր շինութիւն: Այդ շինութեան վերի յարկումը ջրամբարներ են շինում և այն ակզից սկսում են խողովակներով ցած իջեցնել և տանել աների որ յարկը որ կամենում են: Գետի ջուրը բարձրանալով այդ ամբարների մէջն է թափվում առանձին գործիքներով, որոնք ասվում են ջրհասաններ: Այդ ջրամբարներից ջուրը հոսելով խողովակների միջով՝ կարող է տրաներից վեր ելնել մինչև այնքան բարձրութեան, ինչ բարձրութեան մէջ որ ջրամբարներն են գտնվում, և որովհետև ջրամբարները բաւականին բարձր ակզ են, այդ պատճառով այն ակզից տարած ջուրըն էլ կարողանում են աների չորբորդ, — հինգերորդ յարկի սենեակների պատերից աղբիւրի նման բղխեցնել:

Եթէ երկու հարրդակից անօթներից մէկը ցածր է միւսից և նեղ, նորա միջեց ջուրը շատրուանի պէս է բղխում, որով կամենում է այն բարձրութեան հասնել, ինչ բարձրութիւն որ ունի մեծ անօթի ջուրը: Ա եր առնենք մի խցան և երկու ծակ բանանք նորա միջեց, մի ծակի մէջ դնենք ձագարի խողովակը, միւսի մէջ մի բարակ ապակեայ խողովակ, յետոյ այդ խցանը փոքրիկ խողովակն ու ձագարը կոխենք որուակի բերանը և կնքամոմով ամրացնենք: Յետոյ փոքրիկ խողովակի բերանը

փակենք և սկսենք ձագարի միջով ջուր լցնել սրուակի մէջ: Արբ որ սրուակը և բոլոր ձագարը ջրով կը լցնուի՝ այնուհետև բանանք փոքրիկ խողովակի բերանը, նորանից ջուրը կսկսի շատրուանի պէս վեր ցայտել:

ԺԶ.

Գաւառի բնակիչները ջրի հատմանը:

Արբ որ ամռան եղանակին քանի մի օր շարունակ խիստ շոք է լինում, կանաչ խտառ չորանում է, ծաղիկները թառամում են, միով բանիւ բոլոր բոյսերը կարծես կենդանութիւնից զրկվում մեռանում են: Բայց որ անձրև է գալիս այդ միջոցներին և երկիրը թրջում, խեղճ խտառ կանաչում է, թառամած ծաղիկները վերակենդանութիւն ստանալով բարձրացնում են զլինները: Ասել է թէ ջուրը անհրաժեշտ հարկաւոր է բոյսերի կեանքի համար: Բայց ինչո՞ւ համար այսչափ հարկաւոր է ջուրը բոյսերին:

Բոյսերը կանգնում են հողի մէջ իրանց արմատներովը, որոց միջնորդութեամբ և ստանում են իրանց կերակուրը երկրից: Արմատի երեսին բազմաթիւ ծակախցներ կան, այդ ծակախցներից սկսում են ամենամանրիկ խողովակներ և տարածվում բոյսի բոլոր մասների մէջ: Գրանց, այսինքն այդ խողովակներին ուրիշ բաւով ասում են առօրինի: Արբ որ երկիրը չոր է լինում՝ արմատի ծակախցները սկսվում փակվում են, էլ այնուհետև բոյսը սնունդ չի ստանում: Անձրևի ջուրը ներս ծծուելով հողի մէջ, լուծում է նորա մասները, որոնք հարկաւոր են բոյսի սննդեան համար և

այդպէսով հեշտացնում է նոյա ներս
 ծծուխը արմատներէ մէջ, որտեղից ըս-
 կըսում են յիշեալ անօթներէ միջով վեր
 բարձրանալ և տարածուիլ բոյսի բոլոր
 մասանց մէջ, և նորան սնունդ տալ, ա-
 ձեցնել: Այդ պատճառով հարկաւոր է
 անշուշտ օրը միանգամ ջրել և այն ծա-
 դիկները, որ մենք պահում ենք մեր սնն-
 եակներումը որպէս զարգարանք:

Բայց չափազանց շատ ջրուելը նոյնպէս
 ֆնասակար է բոյսերի համար: Այն տեղե-
 ղումը, ուր ջուրը միշտ անպակաս է և ա-
 ռատութեամբ է գտնվում, այնպիսի խոտ
 է բուսնում, որ պիտանի չի լինում տա-
 նու կենդանիներէ համար: Բնդեղէնները
 առ հասարակ չափազանց ջրուելով շատ
 քիչ են պտուղ տալիս: Այդ պատճառով
 լաւ երկրագործները ցամաքացնում են
 այդպիսի տեղերը և անպիտան ճահիճնե-
 րը փոխարկում են պողաբեր դաշտերի:
 Այդ նպատակին հասնելու համար հե-
 տեկալ հնարքն են գործ դնում: Գաշտի
 միջով երկու կամ երեք օտնաչափ խորու-
 թեամբ միաձիգ երկայնութեամբ կաւէ խո-
 դովակներ են դարսում՝ մէկի ծայրը միւսի-
 նի մէջ մացնելով: Գորա մօտերից աւելա-
 ցնում են և ուրիշ կարգեր միաշար շա-
 բուած խողովակների այնպէս որ՝ այս կողմ-
 նակի ձիւղերը առաջին կարգի հետ կազ-
 մում են սուր անկիւն: Աւելի պարզ հաս-
 կանալու համար թէ ինչպէս են դասաւո-
 բուած այդ խողովակների կարգերը մէկը
 միւսի վերաբերութեամբ, որ ծառից կա-
 միս մի տերև առ և նայելը նորա վերայ ե-
 դած երակներին: Տերևի վերայ եղած ե-
 րակների դասաւորութիւնը և ուղղու-
 թիւնը բոլորովին նման է մեր ստած խո-

ղովակների կարգերին: Աթէ մօտ տեղերը
 լիճ կամ դեռ կայ, խողովակների զլխաւոր
 ձիւղի մէկ ծայրը հաղորդում են նորա
 հետ, իսկ եթէ չը կայ, գորա համար ա-
 ռանձին լճակ են փորում: Էթի տեսք
 ինչ է լինում այդ բոլորը պատրաստե-
 լուց յետոյ: Զուրը կաւերի (խողովակնե-
 րի) ծակափքներով ներս ծծուելով թա-
 փանցում է խողովակները և նրանց միջով
 հոսելով թափվում է գետը կամ լիճը, և
 այս կերպով աւելորդ թացութիւնը հե-
 ռանում է ճահիճներից և վերափոխվում
 ցամաք դաշտի: Այս հնարքով, այսինքն
 կաւէ խողովակների միջնորդութեամբ ցա-
 մաքեցնելու գործողութեանը Աւերոպա-
 ցիք Անգղիերէն բառով ասում են գրե-
 նաժ:

Զուրը հարկաւոր է ոչ միայն բոյսերի
 կեանքը պահպանելու համար, այլ և մար-
 գոց և այլ կենդանիների: Մինչև այսօր
 դեռ ևս դանուած չէ ոչ մի կենդանի, որ
 ջրի հարկաւորութիւն չունենար: Թէպէտ
 և մենք շատ քիչ ենք ջուր գործ դնում,
 բայց չը պէտք է մոռանալ, որ մեր գործ-
 աճած ըմպելիքների և ուտելիքների մէջ
 բաւականաչափ ջուր է պարունակվում:
 Այսպէս 8 Ֆունտ կաթի մէջ համարեա
 թէ 7 Ֆունտ ջուր կայ, 10 Ֆունտ գինու-
 մէջ համարեա թէ 9 Ֆունտ ջուր կայ:
 Արիւնը, շոդեքը և մեր իսկ մարմինը ան-
 դամ շատ ջուր է պարունակում իւր մէջ:
 Այդ իսկ պատճառով լաւ ջուր ունենալը
 մեզ համար չափազանց կարեւոր է, պատ-
 ճառ՝ վատ ջուրը ֆնասակար է մեր առող-
 ջութեանը:

Բայց ինչ կերպով իմանանք թէ մա-
 քուր է արգեօք ջուրը, և կարելի է գործ

դնել նորան կերակրի մէջ : Մենք այդ իմանալու համար, քիթ ու լեզու ունինք, քիթը կամ ունգուները հոտառութեան, և բերանը կամ լեզուն՝ համը իմանալու համար : Բայց եթէ բնութիւնից մեզ պարզեա՞ծ հնարքովը չը կարողանանք իմանալ թէ մաքուր է արգեօք ջուրը, այդ ժամանակ վեր կառնենք մի կաւէ բզուզ, մեր ուզած ջուրը կածենք նորա մէջ և կը դրնենք տաք վառարանի վերայ : Արբ որ ջրի մեծ մասը կը շոգիանայ՝ այն ժամանակ մընացած ջրի համը կը տեսնենք, և նորանից կիմանանք մաքուր է ջուրը թէ ոչ, պատճառ՝ նորա մէջ լուծուած աղերի համը ջրի սակաւ քանակութեան մէջ աւելի զգալի կը լինի :

Պզտոր ջուրը մաքրում են հետեւեալ կերպով : Տակառի մէջ կարգ-կարգ աւազ ու ածուխ են ածում, բայց այնպէս որ վարի ու վերի կարգը աւազ լինի : Տակառի մէջ ածած պզտոր ջուրը ածուխի ու աւազի միջով անցնելով պարզվում է, եթէ վատ հոտ ու համ էլ ունի, այն էլ ածուխին է տալիս, և այսպէս բոլորովին մաքրուելով՝ թափվում է տակառի վարի կողմումը եղած ծորակից : Չուրը շոգիացնելով էլ են մաքրում : Աւերցնում են մի մետաղէ կաթսայի պէս բան, կափարիչով ամրացրած բերանը : Ապիարիչի վերայից մի մետաղէ խողովակ են ասնում մի ուրիշ ամանի մէջ, որին ասում են ընդունարան : Մաքրելի ջուրը ածում են առաջին ամանի մէջ և եռացնում : Չուրը այդ միջոցին գոլորշիանում է և կափարիչի խողովակով դնում է ընդունարանի մէջ խտանում և ջուր դառնում, բոլորովին մաքուր և անխառն պզտորոզ

մասներից : Ընդունարանը դրած է պաղ ջրի մէջ, որ միշտ պաղ մնայ, եթէ ոչ նա չի կարողանալ շոգին ջրի փոխարկել : Չքրի այս կերպ մաքրելուն ասում են Բոբոն կամ Բորեդոն : Փոքր չափով ինքներս կարող ենք ջուր թորեցնել : Աւեր կառնենք երկու ապակեայ շիշ : Մէկը ջուրով կը լցնենք և բերանը կամրացնենք խցանով : Յետոյ վեր կառնենք մի ապակեայ խողովակ, դուրա մի ծայրը խցանի միջով կը մտցնենք ջրի շիշը, իսկ միւս ծայրը դատարկ շիշի մէջ : Արկողին շիշերի բերանը կամրացնենք, դատարկ շիշը կը դնենք պաղ ջրի մէջ և կսկսենք տաքացնել ջրալից շիշը : Ղորա մէջ եղած ջուրը կսկսի գոլորշիանալ և խողովակով երթալ դատարկ շիշը, ուր խտանալով՝ կը փոխարկուի ջրի : Աւ այսպէս մենք կըրտանանք թորեալ ջուր : Այս հնարքը նաւերի վերայ աւելի են դործ դնում, երբ որ անոյշ ջուրը հասնում է սկսում են ծովի աղիադառն ջուրը թորել : Բայց այս կերպով ստացած ջուրը անհամ է լինում : Ան էլի ուրիշ տեսակ հնարներ ջուր մաքրելու համար, այսպէս անցնում են ծակոտկէն քարի միջով, կամ առանձին պատրաստած բաղադրութիւն են ձրգում ջրի մէջ : Շատ տեղեր ջրի մէջ ածում են ծեծած պաղլեղ կամ նուշ :

ԺԵ


ՄՍՐԲԻՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՍԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ընդդէմ հայոց-լիւն.

Ամենին յայտնի է, որ եթէ սեղանի վերայ եղած քարի տեղը ուղեմանք փայտ դնել, անպատճառ առաջ հարկաւոր կը

լինի քարը հեռացնել : Հիմայ տեսնենք
 թէ մի և նոյնը պէտք է անել արդեօք և
 ուրիշ մարմինների վերաբերութեամբ :
 Քարի տեղ ուրիշ բան գնելու համար,
 հարկաւոր եղաւ նախ քարը վերցնել :
 Բայց եթէ քար չէ, որի տեղը ուղղւմ ենք
 մի ուրիշ բան գնել, այլ ծորելի և առա-
 ձգականահեղուկ մարմին է, դրանց էլ
 հարկաւոր կը լինի նախ վերցնել և ապա
 մի ուրիշ բան գնել : Տեսնենք :

Աւերցնենք մէկ բաժակ լիքը ջուր և ձը-
 գենք նորա մէջ մի փաքրիկ քար : Մենք
 կը տեսնենք որ փոքր ինչ ջուր թափուե-
 ցաւ բաժակից : Այս ջուրը նորա համար
 թափուեցաւ, որ նորա բռնած տեղը այ-
 ժրմ քարը բռնեց, նա էլ տեղ չունենա-
 լով բաժակի մէջ՝ դուրս եկաւ : Բայց կա-
 րելի չէ իմանալ ինչքան ջուր կը թա-
 փուէր : Այո, կարելի է թափուած ջրի
 քանակութիւնը այնքան է, ինչքան որ
 քարի ծաւալն է, պատճառ՝ քարի բռնած
 տեղը իւր ծաւալին է հաւասար : Հիմա
 դարտակենք բաժակի ջուրը : Այդ բաժա-
 կը որ հիմա դատարկ է համարվում, դա
 իսկապէս դատարկ չէ, դա լիքն է, միայն
 ուրիշ բանով չէ, այլ օդով : Այդ բաժա-
 կը բերանքսի վայր
 ձգենք այժմ մի կի-
 սով չափ ջրով լիքը
 ամանի մէջ, այնպէս
 որ ամբողջ բաժա-
 կը ընկղմուի ջրումը :



Այժմ որքան էլ որ հրենք բաժակի վե-
 րեից, նա այնու ամենայնիւ բոլորովին չի
 լցնուիլ ջրով, այլ նորա յատակի վերայ կը
 մնայ դատարկ տարածութիւն : Բարձրաց-
 նենք բաժակը, չը հանելով ջրից և բը-

նենք փոքր ինչ թեքուած, մի կողմի վե-
 րայ ծռած : Այդ միջոցին բաժակի միջից
 կսկսին դուրս թռչիլ պղպջակներ : Աթէ
 կրկին շտկենք բաժակը և դարձեալ բե-
 րանքս ի վայ բռնենք, կը տեսնենք, որ ա-
 ռաջուանից փոքր ինչ աւելի ջուր կը մանի
 նորա մէջ : Արկին սկսենք թեքել, և պղ-
 պջակներ արձակել, և կրկին շտկել, դար-
 ձեալ ջուր կաւելանայ նորա մէջ : Աթէ
 շարունակենք այս կրկնումը քանի մի ան-
 գամ՝ բաժակը վերջապէս բոլորովին կը
 լցուի ջրով :

Այժմ այս է հարկաւոր իմանալ, թէ
 ինչու առաջին իսկ անդամից, երբ որ բա-
 ժակը ջրի մէջ ընկղմեցինք, նա չը լցուե-
 ցաւ ջրով : Արբ որ մենք բաժակը բե-
 րանքսի վայր ընկղմեցինք ջրի մէջ, նորա
 մէջ օդով լիքն էր, և այդ օդն էր ջրի
 ներս մտնելուն արդեւը : Օդը չէր կա-
 ըող դուրս գալ բաժակից, պատճառ՝
 բաժակի բերանը ջրի մէջն էր, իսկ ջուրը
 թոյլ չէր ապրիս օդին դուրս գալու, ինչ-
 պէս օդը չէր թոյլ ապրիս ջրին ներս գը-
 նալու : Բայց երբ որ թեքեցինք բաժակը,
 ջուրը սկսեց դուրս մղել մասամբ նորա
 միջից օդը, որ և յագթուելով ջրից,
 դուրս եկաւ նորա երեսը պղպջակի ձևով :
 Ուրեմն բաժակի մէջ սակաւ օդ մնաց և
 ջուրը այդ պակասորդի տեղը բռնեց :

Աթէ մի երկայն պարանոցով սրուակի
 մէջ մացնենք ձագարի խողովակը այնպէս
 սրիս, որ նորա ամբերից օդը տեղ չունե-
 նայ դուրս գալու և սկսենք մկէն ի մկ
 շտա ջուր ամել ձագարի մէջ, ջուրը ներս
 չի երթալ սրուակի մէջ, չը նայելով որ
 ձագարի խողովակը բաց է նորա համար և
 բաւականին լայն ճանապարհ կայ նորա

Համար ներս երթալու: Օղն է, որ թոյլ չի ապրիս ջրին ներս երթալու, քանի որ ինքը այնանգ է և ճանապարհ չունի իւր ակեղից հեռանալու: Բայց փոքր ինչ բարձրացնենք ձագարը և նորա խողովակի չորս կողմը բացուի օղի համար, ջուրը խեղոյն վայր կիջնի և կը լցնէ սրուակը:

Ա իր առնենք մէկ սրուակ և նրան պռունդէ պռունդ ջրով լցնենք, բերնին մի խցան գնե՛ք, երկաթի թելով կապենք այդ խցանը սրուակից և վերան էլ հալած ձիւթ ածենք և այսպէս պնդապէս ամրացնենք որ շարժելու պատճառ չունենայ: Արուակի բերանը այսպէս պատրաստելուց յետոյ, վեր առնենք մի մախաթ կամ բիզ, ինչ և իցէ մեծ ասեղի պէս մի բան, և սկսենք այդ ասեղի ծայրը խցանի միջով ներս հրել սրուակի մէջ: Աթէ ամենայն բան, ինչպէս պէտք էր, զգուշութեամբ կտաքած լինինք, ասեղի ծայրը ջրին դիպչելուն պէս, սրուակը կը ձեղբուի:

Պորանից աշկարայ երևում է, որ բոլոր մարմինները ընդդիմահարութիւն ունին: Ընդդիմահարութիւն բառովս պէտք է հասկանալ մարմինների այն յատկութիւնը, որով երկու մարմին մի և նոյն ժամանակ չեն կարողանում մի և նոյն ակղը բռնել:

ԺԸ.

Բաժանականութիւն.

Ա իր առնենք մի կտոր կաւ, սկսենք նորան կտորակել, և յետոյ փշրել: Մենք կը տեսնենք, որ մեր վերջրած կաւի կտորը մի քանի մանր կտոր արինք, որոնք փռշրելու ժամանակ փոշիացան: Ա իր առ-

նենք այժմ մի կտոր փայտ: Մենք այդ մի կտոր փայտից կարող ենք կարտել փոքրիկ շեւղեր, այդ փոքրիկ շեւղերից կարող ենք էլի փոքրիկ շեւղեր շինել: Միով բանիւ այդ մի կտոր փայտը կարող ենք հազարաւոր մանր կտորներ անել:

Բոլոր միւս մարմիններն ևս կարող ենք կաւի և փայտի նման մանրացնել և անհամար թւով կտորներ անել: Մէկ ընկուզի մեծութեան կտոր արծաթից կարելի է թելը շինել քանի մի վերսա երկայնութեամբ և այդ բոլոր թելը կարելի է ոսկեղօծել մի քորոցի գնախ չափ ոսկով:

Մի պնակ լեքը ջրի մէջ ձգենք քորոցի գլխի չափ մի կտորիկ կարմրաներկ և ըսկըտենք խառնել, բոլոր ջուրը կսկսի կարմրիլ: Պորանից կարող ենք եզրակացնել, թէ ուրեմն ինչպիսի անվերջ մանր մասնների պիտի բաժանուէր մեր ներկը, որ կարողանար ներկիլ այսչափ շատ ջուրը:

Եյս պատճառով ամենայն մարմին բաժանական է ամենամանր մասների: Եյդ մասները, որոնք ամենազօրաւոր խոշորացուցով հալու ենք կարողանում տեսնել, մենք զրանց կարող ենք էլի բաժանել մաքրով: Եյդ մասները մաքրով բաժանելով մենք վերջապէս կը հասնենք այնպիսի մասների, որ էլ չենք կարող բաժանել: Եյս տեսակ մասները, որ էլ չի կարելի մաքրով ևս բաժանել, գիտնականները դրանց անուանում են անհատ: Աւրեմն ամեն մի մարմին անհատներից է բաղկացած: Յայանի բան է, որ մի մարմնի անհատները նման չեն մի ուրիշ մարմնի անհատներին: Մետաքսեղէն զործուածները կարմիր գունով ներկելու համար զործ են գնում կարմիր որդան այուլած

ներկը: Արդանը մի տեսակ խոտի որդն է
 և դրանից խիստ շատ կայ Ամերիկայումը
 (այլ և Հայաստանի Արարատեան դաշ-
 տումը Նոր-Վ իրապի մտերքին), որոնք
 գանվում են մի քանի տեսակ բոյսերի վե-
 րայ: Այդ որդերը ժողովում են, չորա-
 ցնում են, և յետոյ գործ են դնում որ-
 պէս կարմիր ներկի: Մէկ Ֆունտ որդանով
 կարելի է ներկել 10 Ֆունտ մետաքսէ
 թել: Այդ բոլոր թելերը եթէ միմեանցից
 կապեն, դոքա 12 վերտու երկայնու թեամբ
 տարածութիւն կը բռնեն: Այդ թելերից
 ամեն մինը բաղկացած է 50 հաս թելե-
 րից, որոնք այնքան բարակ են, ինչպէս
 սարդիոսայնի թելերը, եթէ և այդ թե-
 լերը կապենք միմեանցից, բոլոր ներկուած
 թելի երկայնութիւնը կը տարածուի 600
 վերտու: Աւրեմն ինչպիսի՞ մանր մասների
 պիտի բաժանուէր այդ ներկացու մարմի-
 նը, որ ներկէր այոչտի երկար թելը:

Մեզանից ամենքը շատ անգամ տեսած
 կը լինին թէ ինչպէս է փն արտում շունը
 իւր ակրոջը: Աս վազվղում է ամեն կող-
 մով և հոտոտում է բոլոր առարկա-
 ները, որոնք հանդիպում են նրան ծանա-
 պարհին: Գուք գնում էք բոլորովին չոր
 ծանապարհով, այնպէս որ ոչ մի հետք
 չէք թողնում ձեր ետեւից, բայց այդու
 ամենայնիւ շունը գանում է ձեզ: Ի՞նչ
 պէս է գանում: Արբ որ գուք գնում էք,
 ձեր ոտներից դուրս է դալիս ամենաբարակ
 արտաշնչութիւն: Կնքներդ այդ չէք նկա-
 տիլ, բայց շունը ամենանուրբ հոտաու-
 թիւն ունի, որոյ միջնորդութեամբ նա
 ծանաչում է ձեր ոտների արտաշնչու-
 թիւնը և այսպէս շուտով էլ գանում է
 ձեզ:

Գոյն այդ անվերջ փոքրագոյն և ան-
 տեսանելի մասները, որոնք ստացուեցան
 որդանի ամենաբարակ թելերի վերայ բա-
 ժանուելուցը, և ձեր արտաշնչութիւնը
 օդի մէջ — դոքա են, որ ասվում են ան-
 հաս:

ԺԹ.

ՕՊԱԿՈՒՄԻՒՆ.

Վեր առնենք երկու մարմին, սպունգ
 և հաց: Եթէ ուշի ուշով նայենք այդ
 մարմինների վերայ, մենք կը նկատենք որ
 նոցա մէջ բազմաթիւ մանր ու խոշոր
 բացուածքներ և միջոցներ կան: Այդ
 բացուածքներովը բաժնուած են միմեան-
 ցից մարմնի պինտ մասները:

Չը կա՞ն արդեօք էլի ուրիշ մարմնե-
 ներ, որ նմանապէս բացուածքներ ունե-
 նան ինչպէս հացն ու սպունգը: Ահա
 ձեզ, օրինակի համար, մի կտոր չոր փայտէ
 տախտակ և մի թերթ ծծան թուղթ:
 Տեսնենք սոցա մէջ ևս չը կա՞ն արդեօք
 բացուածքներ: Արծեմ որ կան: Եթէ
 դոցա վերայ ջուր ածենք, դոցա երկու
 երեսներն էլ կը թռչուեն, պատճառ՝ ջու-
 րը դրանց միջով կանցնի միւս երեսը: Ե-
 թէ դոքա բացուածքներ, միջոցներ չու-
 նենային, ջուրը չէր անցնել միւս կողմ:
 Վերցնենք այժմ մի արծաթէ դրամ և
 մի դանակ: Գրանց մէջ էլ կա՞ն միջոցներ:
 Ասյինք որքան կամինք, բայց այսու ա-
 մենայնիւ, դրանց մէջ ոչ ինչ չենք կա-
 բող նկատել, ուստի և կարող ենք ասել
 որ դոքա շունին ծովոտքիկ:

Սակայն պէտք է գիտենալ, որ դոքա էլ
 ունին միջոցներ, միայն այնքան մանր են,
 որ մենք հասարակ աչքով չենք կարող

նկատել: Բայց եթէ վեր առնենք զօրեղ խոշորացոյց ապակի, որ ամենայն բան մեծ զիրքով է ցոյց է տալիս, և նորանով նայենք, մենք կը նկատենք դրամի երկոքին երեսներէ վերայ մանրիկ փոսեր և անհարթութիւններ, որոնք նշան են միջոցների ներկայութեանը:

Ուսումնական մարդիկը յետագայ փորձով իմացել են, որ այդ անսակ մարմինների մէջ ևս կան միջոցներ: Աւեր են առել ոսկի և նորանից շինել են մի գունամէջը դատարկ: Գորս մէջ ջուր են ածել, և բաց անզը միացրել, այնպէս որ դրսեկց ոչ մի բերան կամ ծակ տեղ չունենայ: Յետոյ սկսել են մեքենայով սխմել այդ գունտը և մի առ ժամանակից յետոյ ջուրը սկսել է դուրս գալ գունտի երեսը:

Այսպէս ուրեմն բոլոր մարմինները միջոցներ ունին իրանց ամենամանր մասների, կամ ինչպէս ասացինք անհատների մէջերումը, որով այդ անհատները միմեանցից բաժանուած են: Այդ միջոցները որ ունին անհատները իրարու մէջ, ասվում են Զակոքի, իսկ այդ յատկութիւնը որ ունին մարմինները, ասվում է Զակոքոթիւն: Ուրեմն բոլոր մարմինները Զակոքոթիւն ունին:

Նայենք մեր ձեռների վերայ: Մարդու կաշուի մէջ ևս բազմաթիւ ծակաիքներ կան, թէ և մենք չենք տեսնում հասարակ աչքով: Բայց ման գալիս այդ ծակաիքներից դուրս է գալիս արտաշնչութիւն, որ երբեմն պարզով քրտնքի կաթիլներ է ձեւացնում, և մենք այդ ժամանակ տեսնում ենք նորան:

Աւեր առնենք մի նեղ պարանոցով շէշ: Այդ շէշ մեծ մասը լցնենք ջրով, իսկ մը-

նացած մասը կամաց ածենք զինու ողին, մի որ և իցէ գունով ներկած: Այդ որ այսպէս շէշը կը լցնենք, յետոյ բերանը խցանով կը պնդացնենք: Ար տեսնենք որ շէշ մէջ դատարկ տարածութիւն չը կայ, նա լիքն է պռնգէ պռոնգ: Հիմա շէշը բռնենք բերանքսի վայր և այնպէս նայենք: Այժմ չենք կարող ասել որ շէշը լիքն է պատճառ՝ նորա մէջ փոքր ինչ դատարկ տարածութիւն կայ: Այդ ցոյց է տալիս, որ հեղուկները ևս ունին ծակոտութիւն: Գինու ողուց փոքր ինչ թափանցել է ջրի ծակաիքների մէջ, դորանից է որ փոքրը ինչ դատարկ տեղ է բացուել շէշ մէջ:

Ապունգը գնենք մի ամանի մէջ, նա շատ ծակաիքներ ունի, որոնք լիքն են օդով: Փոքր ինչ ջուր ածենք սպունգի վերայ: Ինչ կը տեսնենք: Մենք ամանի մէջ ջուր ածեցինք. բայց ո՞ր է, ջուր չը կայ: Հապա ո՞ր գնաց մեր ածած ջուրը: Այժմ գնաց, նա գնաց սպունգի ծակաիքների մէջ, որոնք առաջ օդով էին լցուած: Չուրը դուրս մղեց նրանց միջեց օդը և նորա անզը ինքը բռնեց: Ապունգը մեծացաւ, կամ ինչպէս կասին ուռաւ: Այդ նրանից է, որ ջուրը մանելով նրա ծակաիքների մէջ, անզուորուեցաւ նորա անհատների արանքներումը և սկսաւ նրանց անզահան անելով հեռացնել միմեանցից: Այս օրինակից երևում է, որ մի մարմին կարող է թափանցել մի այլ մարմնի ծակաիքների մէջ: Բայց դորա համար նախ և յառաջ հարկաւոր է հեռացնել ծակաիքներում եղած մարմինները, պատճառ՝ մարմինները ընդդիմահարու թիւն ունին:

Վեր առնենք մի փոքրիկ կտոր շաքար: Այս մարմինը այսինքն շաքարը չափազանց ծակոտկեն է, և արդէն հասարակ աչքով էլ է տեսնվում: Մի բաժակ ջրով ցննենք և մեր շաքարի կտորիկը կամացուկ ձգենք ջրի մէջ: Շաքարը կսկսի փոքր առ փոքր լուծուել ջրի մէջ, բայց ջուր չի թափուել բաժակիցը թէ և լիքն է: Այս ընչիցն է: Շաքարի ծակոտիքները լիքն են օդով, ջուրը դուրս է մղում այդ օդը պղպջակի ձևով և ինքը բռնում նորա տեղը: Ջուրը մտնելով նորա ծակոտիքների մէջ՝ միմեանցից հեռացնում է նորա մասնիկները, այդ մասնիկները յետոյ տեղաւորվում են ջրի անհատների արանքներումը, որով և քաղցրացնում են ջուրը: Յայտնի բան է, եթէ մեծ կտոր

շաքար ձգենք ջրի մէջ, ջուրը կը թափուի մասամբ, այդ դիպուածում ջրի բոլոր ծակոտիքները կը ցուին շաքարի մասնիկներովը և շաքարի աւելցուքսը կսկսի իւր ծաւսըն չափով ջուր դուրս մղել բաժակից:

Այն մարմինները, որոնց ծակոտիքները կարող ենք տեսնել հասարակ աչքով, ասվում են Զուրկոտիկ կամ փերոն: Իսկ այն մարմինները որոնց ծակոտիքները այնքան մանր են, որ չենք կարողանում հասարակ աչքով տեսնել, ասվում են Խիտ մարմիններ: Ամենից խտագոյն մարմիններն են ոսկին և լուսնոսկին:

(Շարունակել)

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՎԸՐԳԸՆՆ Ի ԲԸՆՏԻՔ

Նուր գիշեր է ժամ հանգստի բնութեան խաւար տխուր է գիրկ,
 Հովիկն թեթեւ աստ անդ ծառոց տարուբերէ ոստքն մեղմիկ,
 Լուսինն ամպոց խաւար ի ծոց իւր ցուրտ լուսոյն քանայ հորդան,
 Գէպ անցք փոքրիկ մի նեղագիր, բանտին է այդ սեւտ պատուհան:
 Տխուր է բանտս, որմունքն սեւա, ուր շունչ եւ ոչ մի լսելի
 Իբր գերեզման աստ մեռելոց լուծիւն տխուր տեղի ունի,
 Ուր ոչ մարդոյն ձայն յուսադիր, ոչ թռչնեկացն սիրուն սուղիչ
 Առաւօտուց ոչ Արէզին ցօղուն ասղունք այսր թափանցիկ:
 Նա դիշերոյն եւ ցուրտ լուսինն ոչ համարձակ զայնի նշոյլ,
 Ձի լուսամուտն նեղանձուկ, վանդակապատ երկամածոյ,
 Լուսինն նուազ աղօտալոյս հազիւ ընդ այն աստ առկայծի,
 Ամենայնի յամենայնի բանտ Պարսկական է այս տեղի:
 Այս սառն գետին, բանտարկելոյս այսօր փափուկ իբր անկողին,
 Ննչէ ի բուն աստ ի վրդով ի բիւր եղուկ թշուառ անմին,
 Ո՛վ սա եւ կամ ուստի այսրէն ի խոր հառաչ լալով ճեծէ,
 Մի սա Պարսիկ եղեւնագործ գմեծ պատուհաս իւր աստ քաւէ . . .